

**ՀՀ ֆինանսների նախարարություն**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/3**

**24 հունիսի 2014 թ.**

Քննարկվեց «Երառուպասարկում» ՓԲԸ 31.05.2014 թ-ի թիվ 23-01/49 գանգատը պետական տուրքի գծով գանձման առաջադրված պարտավորության, ինչպես նաև ընկերությանը 01.01.2014 թ-ից ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ:

**«Երառուպասարկում» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.**

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության պետի կողմից կայացվել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 20 որոշումը, համաձայն որի որոշվել է «Երառուպասարկում» ՓԲԸ-ից գանձել 2962064 դրամ (պետ. տուրք 2882984 դրամ, եկամտային հարկ 79080 դրամ), որն առաջացել է 2013 թ-ի դեկտեմբեր ամսվա համար ներկայացված հաշվարկից և 13.12.2009-13.12.2012 թ-ի պետ. գույքի հաշվարկից:

Եկամտային հարկի գծով հաշվարկը ճշտվել և հանվել է, իսկ պետ. գույքի գծով հաշվարկը մնացել է անփոփոխ:

2002 թ-ին ընկերությունը ձեռք է բերել ՀՀ առողջապահության նախարարությունից թիվ կ-XX-000012 լիցենզիան խառն ընդհանուր ստոմատոլոգիայի վերաբերյալ: 2005 թ-ի վերջին ընկերությունը ձեռք է բերել կ-XX-000721 լիցենզիան բժշկական ընդհանուր պրակտիկայի վերաբերյալ, արտահիվանդանոցային գծով սպասարկում կազմակերպելու համար:

Լիցենզիայի ողջ ժամանակաշրջանի ընթացքում երբեք չի իրականացրել ստոմատոլոգիական ծառայություն, այլ միայն զբաղվել է բժշկական ընդհանուր պրակտիկայով: Ընկերության կողմից 2002 թ-ից մինչև լիցենզիայի կասեցումը պարտաճանաչ կերպով ժամանակին վճարվել է պետական տուրքը 50.000 դրամի չափով: 2005 թ-ի վերջին, երբ ձեռք է բերվել բժշկական ընդհանուր պրակտիկայի վերաբերյալ լիցենզիան ընկերությունն այն դիտել է որպես միակ լիցենզիա, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ընկերությունը ստոմատոլոգիական գործունեություն ընդհանրապես չի իրականացրել և լիցենզավորող մարմնի կողմից այդ գործունեության նկատմամբ հսկողություն չի իրականացվել, հաշվետվություններ չի պահանջվել, ընկերությունը ոչ մի անգամ այս գծով հաշվետվություններ չի ներկայացրել, ինչպես նաև դրանք չներկայացնելու համար պատասխանատվության չի ենթարկվել, ուստի այս հանգամանքից ելնելով ընկերությունը համարել է, որ ստոմատոլոգիայի լիցենզիայի գործողությունը կասեցված է (համաձայն լիցենզավորման մասին օրենքի 36-րդ հոդվածի):

2005-2012 թ.թ. ընկած ժամանակաշրջանի ընթացքում հարկային տեսչության հետ կազմված փոխադարձ հաշվարկների մեջ որևէ անգամ չի նշվել, որ ընկերությունը պետական տարքի գծով ունի չվճարված պարտավորություններ:

Ելնելով վերոգրյալից՝ «Երառուպասարկում» ՓԲԸ համարում է, որ թիվ 20 որոշմամբ վճարման առաջադրված 2882984 դրամ (որից 295000 ապառք, 2587984 տույժ և տուգանք) պետական տուրքի գծով գումարը հիմնավոր չէ և ենթակա չէ գանձման, ուստի բնականոն գործունեությունը շարունակելու նպատակով ընկերությունը խնդրում է վերացնել ընկերության նկատմամբ կիրառված արգելանքը:

2. Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, «Երառուպասարկամ» ՓԲԸ-ն 2014 թ-ի համար ԱԱՀ վճարվող համարվելու վերաբերյալ 29.01.2014 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ է ներկայացրել հայտարարություն ՍԱՀ վճարող համարվելու վերաբերյալ: Ըստ վերը նշված հոդվածի հարկատուն համարվում է ԱԱՀ վճարող հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարության մեջ նշված օրացուցային տարվա ավարտը, բայց ոչ շուտ հայտարարությունում նշված օրը ներառող եռամսյակի առաջին օրացուցային օրվանից, այսինքն՝ 2014 թ-ի հունվարի 1-ից: Հաշվի առնելով, որ առաջին աշխատանքային օրը սկսվել է հունվարի 3-ից, սխալմամբ այն նշվել է հենց առաջին աշխատանքային օրը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ «Երառուպասարկամ» ՓԲԸ-ն հիմնադրման օրվանից սկսած մշտապես գործել է ավելացված արժեքի հարկի վճարման դաշտում:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է ԱԱՀ գծով 01.01.2014 թ-ի դրությամբ առկա 3 մլն 341 հազ. դրամ դեբետային մնացորդը վերականգնել, այն համարել ԱԱՀ գծով գերավճար:

### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

1. ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2002 թ-ին «Երառուպասարկամ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև ընկերություն) տրամադրվել է թիվ Կ-XX-000012 «Բժշկական օգնություն և սպասարկում» (խառն ընդհանուր ստոմատոլոգիա) անժամկետ լիցենզիան, իսկ 2005 թ-ին ընկերությանը տրամադրվել է թիվ Կ-XX-000721 «Բժշկական օգնություն և սպասարկում» (բժշկական ընդհանուր պրակտիկա) անժամկետ լիցենզիան:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 04.02.2014 թ-ի թիվ 21 որոշմամբ պետական տուրքի գծով գանձման առաջադրված 2.882.984 դրամն առաջացել է «Բժշկական օգնություն և սպասարկում» (խառն ընդհանուր ստոմատոլոգիա) թիվ Կ-XX-000012 անժամկետ լիցենզիայի գծով նախատեսված պետական տուրքի գումարները սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով: Մասնավորապես, վերոգրյալ լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի գումարները 2002 թ-ից մինչև 2005 թ-ն ընկած ժամանակահատվածի համար վճարվել է, սակայն 2005 թ-ին թիվ Կ-XX-000721 լիցենզիան ստանալուց հետո ընկերությունը դադարել է թիվ Կ-XX-000012 լիցենզիայի համար պետական տուրքի գումարները վճարելուց: Արդյունքում 04.02.2014 թ-ի դրությամբ թիվ Կ-XX-000012 լիցենզիայի համար պետական տուրքի գծով պարտավորությունը կազմել է ընդամենը 2.882.984 դրամ:

Քննարկվող դեպքում թիվ Կ-XX-000012 անժամկետ լիցենզիայի գծով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պետական տուրքի գումարները սահմանված ժամկետներում չվճարելու համար ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 04.02.2014 թ-ի թիվ 21 որոշմամբ պետական տուրքի գծով գանձման է առաջադրվել ընդամենը 2.882.984 դրամ, ինչն իրավաչափ է և թխում է գործող օրենսդրության պահանջներից:

2. «Երառուպասարկամ» ՓԲԸ կողմից 29.01.2014 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ է ներկայացրել հայտարարություն ՍԱՀ վճարող համարվելու վերաբերյալ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014 թ-ին առաջին աշխատանքային օրը սկսվել է հունվարի 3-ից, սխալմամբ ԱԱՀ վճարող համարվելու ժամկետի սկիզբը 01.01.2014 թ-ի փոխարեն նշվել է 03.01.2014 թ-ը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն

իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատով բերված պահանջը՝ 01.01.2014 թ-ից ընկերությանն ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ, ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## **ո թ ո շ ու մ է՝**

1. «Երառսպասարկում» ՓԲԸ 31.05.2014 թ-ի թիվ 23-01/49 գանգատը պետական տուրքի գծով գանձման առաջադրված պարտավորությունները վերանայելու մասով, մերժել:

2. «Երառսպասարկում» ՓԲԸ-ին 01.01.2014 թ-ից համարել ավելացված արժեքի հարկ վճարող:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**